Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2011 թ.
մայիսի 13-ի N 419 - Ա
որոշման

Կ Ա Զ Մ

ՊԵՏԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Տեսչական բարեփոխումների քարտուղարության ներկայացուցիչ (աշխատանքային խմբի ղեկավար)

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության երկու ներկայացուցիչ

Առողջապահության ոլորտում գործող գիտական հաստատությունների երկու ներկայացուցիչ (համաձայնությամբ)

Գործարարների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների երկու ներկայացուցիչ (ներկայացնում է Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատը) (համաձայնությամբ)

Սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններից երկու ներկայացուցիչ (համաձայնությամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2011 թ.
մայիսի 13-ի N 419 - Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են տեսչության ստուգաթերթերում սահմանված հարցերի կշիռների սահմանման և տնտեսավարող սուբյեկտների գործունեության տեսակների ռիսկայնության գնահատման գործընթացներն ապահովող աշխատանքային խմբի գործունեության հիմնական սկզբունքները:

2. Աշխատանքային խումբն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունում (այսուհետ՝ տեսչություն) ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրման մեթոդաբանությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

3. Աշխատանքային խումբը տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի քարտուղարության խորհրդատուն է՝ տեսչությունում ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրմանն առնչվող հարցերում:

4. Աշխատանքային խմբի նպատակներն են՝

1) տնտեսական գործունեության տեսակների համար հիգիենիկ ռիսկերի գնահատումը.

2) մշակված ստուգաթերթերի մասին վերջնական առաջարկության տրամադրումը.

3) մշակված ստուգաթերթերում ներառված հարցերի կշիռների սահմանումը:

5. Աշխատանքային խումբն իր գործունեությամբ հաշվետու է տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի քարտուղարությանը:

6. Աշխատանքային խումբը կազմված է ղեկավարից և անդամներից, ովքեր աշխատանքային խմբի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

7. Աշխատանքային խումբն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են խմբի ղեկավարի կողմից, ըստ անհրաժեշտության, բայց առնվազն երկու շաբաթը մեկ անգամ:

8. Աշխատանքային խմբի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է խմբի անդամների կեսից ավելին:

9. Աշխատանքային խմբի նիստերը վարում է աշխատանքային խմբի ղեկավարը, իսկ նրա բացակայության դեպքում՝ խմբի անդամներից մեկը՝ նրա հանձնարարությամբ:

10. Աշխատանքային խմբի նիստի ժամանակ որոշվում է հաջորդ նիստի հարցերի շրջանակը:

11. Աշխատանքային խմբի նիստերին կարող են հրավիրվել պետական մարմինների, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

12. Աշխատանքային խմբի անդամները ենթակա են փոփոխման ռոտացիոն սկզբունքով, ըստ անհրաժեշտության՝ կախված քննարկման ոլորտի առանձնահատկություններից:

13. Աշխատանքային խմբի աշխատանքների կազմակերպչական և նյութատեխնիկական ապահովումն իրականացնում է առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմինը:

14. Աշխատանքային խմբի ղեկավարը՝

1) ղեկավարում է աշխատանքային խմբի գործունեությունը.

2) հրավիրում և վարում է աշխատանքային խմբի նիստերը.

3) նշանակում է աշխատանքային խմբի նիստի անցկացման օրը, վայրը և հաստատում նիստի օրակարգը.

4) ներկայացնում է աշխատանքային խումբն այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում.

5) իրականացնում է սույն աշխատակարգից բխող այլ լիազորություններ:

15. Աշխատանքային խմբի անդամը՝

1) մասնակցում է աշխատանքային խմբի աշխատանքներին.

2) հարցեր և առաջարկություններ է ներկայացնում աշխատանքային խմբի քննարկմանը.

3) ներկայացնում է առաջարկություններ աշխատանքային խմբի գործունեության և նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

4) քվեարկում է խմբի ղեկավարի կողմից քննարկման դրված հարցերի վերաբերյալ.

5) կատարում է աշխատանքային խմբի որոշումները և նրա ղեկավարի հանձնարարականները:

16. Աշխատանքային խմբի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խմբի ղեկավարի ձայնը վճռորոշ է:

17. Աշխատանքային խմբի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ